ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՄԱԾՁԲ-25/2 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պատվիրակությունների ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.09.2025թ. ժամը 17-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետով նախատեսված գնահատող հանձնաժողովի լիազորություններն իրականացնող պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Օ.Էլոյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

-ՊԵԿ-ՄԱԾՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետով նախատեսված գնահատող հանձնաժողովի լիազորություններն իրականացնող պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Օ.Էլոյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-25/2 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու համար 24.09.2025թ. էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր էր ուղարկվել՝ «ԴՎԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ-ին՝ ք.Երևան, Պարոնյան փող., 40 շենք, հեռ. 010 53-03-57, էլ.փոստ՝ diana.zakaryan@7visionshotels.com):

-ՊԵԿ-ՄԱԾՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար «ԴՎԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է հայտ, որի առաջարկված գինը հետևյալն է.

Հ/Հ	Չ/Հ	Մասնակցի անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գինը՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«ԴՎԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ	Կատարողը պետք է 2025 թվականի սեպտեմբերի 24-ին տրամադրի Դվին հյուրանոցային համալիրի «Պապիկ» սրահը, LED էկրաններ 45 անձի համար 2025 թվականի սեպտեմբերի 21-ից 25-ը ԱՊՀ մասնակից պետությունների	833 333	20 %	1 000 000	**1 000 000**

			հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի 24-րդ նիստի կազմակերպման համար (Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 40)				

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումը իրականացնել նույն նիստի ընթացքում:

-«ԴՎԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «ԴՎԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝

1. «ԴՎԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2 Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ԴՎԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Գնահատող հանձնաժողովի լիազորություններն
իրականացնող պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Օ.Էլոյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան